սարդներ առանց ժողովրդական ուղղութեան, առանց ազգային հոգոյ և ապրուստի համար ցրվել են գիւղերը։ Այսպէս պատրաստուած ուսուցիչները գիւղերումը բնականաբար միշտ փորձանքների են պատահում։ օրինակի համար մի տեղ վարժապետը պաս է ուտում և քարոզում է ժողովրդին և իւր աշակերտներին, որ պաս ուտելը մեղք չէ. դրան գիւղացիք չեն կարող համբերել կը ծեծեն և դուրս կ'անեն։ Միւս տեղ վարժապետը գնում է եկեղեցի և տեսնելով որ տէրտէրը դեռ չի եկել, ինքն է օրհնում ժամը։ Այն վարժապետը, որ խառնվում տէրտէրի գործերին, գիւղացիք սորան չեն կարող պահել։ Ուրիշ տեղ վարժապետը Դարվինի մտքերը աղճատելով քարոզում է, որ Ադամ Եւան սուտ են, մեր նախապապը պարոն օրանգու-

---

ուեցին հասարակութիւնից այդ մեծ պակասութիւնը լցուցանելու համար։ Բայց այդ ընկերութիւնները այնքան տնընդունակ, անփորձ, աննախատես դանուեցան, որ առանց հաստատուն դրամագլխի պատրաստութեան նոքա աշխատեցին իւրեանց բոլոր կարողութեամբ բազմաթիւ ուսումնարաններ բաց անել։ Այդ ամենը նոքա անկարող լինելով նիւթապէս եւ բարոյապէս կառավարել, կորցրին հասարակութեան առաջ իւրեանց վարկը եւ այժմ ստիպուած են այնքան տնխորհուրդ հանդուրժով բացած ուսումնարանները հետզհետէ փակել։ Դժբախտաբար օր կը գայ, որ "Միացեալ ընկերութիւնները" ոչ մի ուսումնարան չեն ունենալ։